ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Հաստատում եմ՝

Երևանի Տարածաշրջանային N1 պետական քոլեջի տնօրեն

_____ Պ. Սանթրոսյան

« 23 » 10. 2018թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ, ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՈԴՈՒԼՆԵՐԻ, ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՄԱՆ

1. Գնահատումն ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման ու բարելավման միջոց է: Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումն ու դրանց հիման վրա ուսումնական գործընթացի բարելավումն է , ուսման որակի վերահսկումը: Գոյություն ունեն գնահատման մի շարք ձևեր՝ գիտելիքների ընթացիկ ստուգում, ընթացիկ գնահատում, կասամյակային (տարեկան) գնահատում և այլն: Գնահատման հիմնական սկզբունքներն են՝ արդարությունը, անկողմնակալությունը, հավաստիությունը, հիմնավորվածությունը, հուսալիությունը, մատչելիությունը և թափանցիկությունը:
2. Սույն կանոնակարգը կարգավորում է սովորողի գիտելիքների ընթացիկ ստուգման, ընթացիկ և կիսամյակային (տարեկան) քննությունների և տվյալ ժամանակահատվածում սովորողի կատարած աշխատանքի գնահատման, հմտությունների ձեռքբերման, գործնական խնդիրների լուծման մեջ ստացած գիտելիքների կիրառման կարողության, ինչպես նաև քննությունների արդյունքների բողոքարկման և քննությունների վերահանձնման գործընթացը:

Քննաձևը

3. Սովորողների գիտելիքների ընթացիկ ստուգումը անց է կացվում կիսամյակի ընթացքում առարկայի առանձին մասերից, բացահայտում է սովորողների պատրաստվածության աստիճանը, որն էլ օգնում է պլանավորել ուսուցման հետագա գործընթացը:
4. Սովորողների ընթացիկ քննությունը ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի, դասընթացի որոշակի բաժնի (բաժինների) յուրացման մակարդակի ստուգումն ու գնահատումն է:
5. Կիսամյակային (տարեկան) քննությունը ամբողջական թեմայի, դասընթացի, առարկայի յուրացման աստիճանի ամփոփումն ու գնահատումն է:
6. Օտար լեզու և բնագիտական առարկաների քննությունը սովորողների հայեցողությամբ է:
7. Ուսումնական պլանով սահմանված ստուգարքների ընդունումը կազմակերպվում է կիսամյակի վերջին շաբաթվա ընթացքում:

Գնահատումը

8. Քոլեջում կիրառվում է միավորային գնահատում, որն ունի սովորողների կրթական ձեռքբերումների մակարդակը վերահսկող դեր:
9. Գնահատումն իրականացվում է 10-միավորային սանդղակով. «անբավարար» գնահատական են համարվում 0-3, «բավարար»՝ 4-6, «լավ»՝ 7-8, «գերազանց»՝9-10 միավորները:
10. Գնահատման համար կարող են կիրառվել մի շարք միջոցներ կամ մեթոդներ՝ հարցում, առաջադրանքի կատարում, հարցարան, թեստ, գնահատման սանդղակ:
11. Ստուգարքը հանձնել/չհանձնելու դեպքում ստուգման գրքույկում կատարվում է նշում՝ «ստուգված»/«չստուգված»:
12. Սովորողը պարտավոր է բոլոր քննությունները հանձնել ուսումնական պլաններին և գրաֆիկներին համապատասխան: Հիվանդության կամ այլ հարգելի պատճառով (հիմնավորված փաստաթղթերով) սահմանված ժամկետում ստուգարքները և քննությունները չհանձնած սովորողների համար սահմանվում ստուգարքների և քննությունների հանձնման անհատական ժամանակացույց:
13. Քննաշրջանում քննության չներկայանալը քննական տեղեկագրում նշվում է ՝չի ներկայացել՞՞ բառերով:

14. Տվյալ կուրսի ուսումնական պլանով նախատեսված տեսական, լաբորատոր-գործնական առաջադրանքները և ուսումնաարտադրական պրակտիկաները, բոլոր քննությունները ու ստուգարքները հաջող հանձնած ուսանողները, ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի ներկայացմամբ և տնօրենի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս, իսկ ավարտական կուրսերի ուսանողները՝ իրավունք են ստանում մասնակցելու պետական որակավորման քննություններին կամ դիպլոմային աշխատանքի պաշտպանությանը:
15. Կիսամյակի ուսումնական ծրագրերը չկատարած ուսանողները, քննաշրջանում երեք տարբեր առարկաներից, կամ նույն առարկայից երեք անգամ «անբավարար» ստացած, ինչպես նաև ստուգարքային առարկայից երեք անգամ «չստուգված» ստացած և սահմանված ժամկետներում առարկայական պարտքերը չմարած (թվից և ստուգման ձևից) ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի ներկայացմամբ և տնօրենի հրամանով հեռացվում է ուսումնական հաստատությունից:

Պարտքերի մարումը, բողոքարկումը և քննությունների վերահանձնումը

16. Կիսամյակային քննությունների ընթացքում 1-2 առարկաներից «անբավարար» ստացած և առավելագույնը 2 ստուգարքից պարտք ունեցող ուսանողը կարող է մարել պարտքը(երը) սահմանված մարման շրջանում, որը հաջորդում է քննաշրջանին:
17. Քննաշրջանի ընթացքում միայն մեկ քննական առարկայից պարտք ունեցող ուսանողը իրավունք ունի այն վերահանձնել «բաց դռների» օրը:
18. Ուսանողը կարող է բողոքարկել գիտելիքի գնահատման արդյունքները, քննություններից (ստուգարքներից) ստացած գնահատականները: Կիսամյակային քննությունների արդյունքները, ինչպես նաև պարտքերի մարման և «բաց դռների» ժամանակահատվածում քննություններից (ստուգարքներից) ստացած անբավարար գնահատականը, ուսանողի գրավոր դիմումի համաձայն քննարկվում է Քոլեջի ներքին որակի ապահովման ենթակառուցվածքում՝ (այսուհետ՝ ենթակառուցվածք) գնահատականների հրապարակումից հետո երեք աշխատանքային օրերի ընթացքում:
19. Անհրաժեշտության դեպքում ենթակառուցվածքի անդամները կարող են դիմել և բողոքարկմանը մասնակից դարձնել Քոլեջի համապատասխան ամբիոնների մասնագետներին՝ բացառությամբ բողոքարկվող գնահատականը նշանակած մասնագետի:
20. Եթե ուսանողը բողոքարկում է գրավոր հանձնած քննությունը, ապա ենթակառուցվածքը ստուգում ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման

համապատասխանությունը սահմանված չափանիշներին: Բանավոր քննության բողոքարկման պարագայում ենթակառուցվածքը ուսանողի գիտելիքը ստուգում է այն մասով, որն ուսանողը բողոքարկում է:

21. Բողոքարկման արդյունքում ենթակառուցվածքը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.
    - քննական գնահատականը (ստուգարքի արդյունքը) մնում է անփոփոխ
    - քննական գնահատականը (ստուգարքի արդյունքը) փոփոխվում է (գնահատականը բարձրացվում է կամ իջեցվում)
22. Ուսանողն իրավունք ունի.

    ա. տարեկան քննությունների, մոդուլների, ստուգարքների գնահատումներով առավելագույնը երեք առարկաներից ստացած «բավարար» և «լավ» գնահատականները բարձրացնել հաջորդ ուսումնական տարվա առաջին կիսամյակում:

    բ. Ավարտական կուրսում քննությունների, մոդուլների, ստուգարքների գնահատումներով առավելագույնը երեք առարկաներից ստացած «բավարար» և «լավ» գնահատականները բարձրացնել վերջին ուսումնական տարվա առաջին կիսամյակում:
23. Ուսանողները վերահանձնման համար իրենց դիմումները ներկայացնում են Քոլեջի ներքին որակի ապահովման ենթակառուցվածքին, որն էլ անհրաժեշտության դեպքում դիմում է Քոլեջի համապատասխան ամբիոններին:
24. Ենթակառուցվածքի կողմից վերահանձնման վերաբերյալ դրական որոշում կայացնելու պարագայում ուսանողը կարող է դիմել և մասնակցել Քոլեջում կազմակերպվող լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներին՝ համապատասխան առարկայից:
25. Վերահանձնման արդյունքում բարձրացված գնահատականները չեն կարող անդրադառնալ նախորդ ուսումնական տարում վճարովի համակարգից անվճար համակարգին անցնելուն:
26. Բողոքարկման, քննությունների վերահանձնման արդյունքների մասին ենթակառուցվածքը զեկուցագիր ներկայացնում Քոլեջի տնօրենին: Գնահատականի փոփոխության դեպքում համապատասխան նշում է կատարվում ամփոփաթերթում, մատյանում և ուսանողի ստուգման գրքույկում: